



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Վ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ)
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի, 5-րդ և 9-րդ մասերի, հիմք ընդունելով Վ. Ոսկանյանի անձնական դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (ծածկագիր՝ 66-2.1-5) Վահագն Էմիլի Ոսկանյանի լիազորությունները (ծառայությունը) դադարեցնել 2019 թվականի մայիսի 15-ից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի (ծածկագիր՝ 66-2.1-5) լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 66-2.3-32) Ելենա Ալեքսենյա Լյուլինայի վրա՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցի կողմից զբաղեցնելը կամ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարությանը (վարչատնտեսական բաժին) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել նրա գործավարությանը հանձնված նյութերի և օգտագործմանը տրամադրված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (հաշվապահական հաշվառման բաժին) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի մայիսի 15
ք. Հրազդան
N 59-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ


